ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ

«02» հուլիսի 2024թ.

ժամը 15:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Մ.Մովսիսյան /նախագահ/,
Ա. Բոշյան, Ն.Մուրադյան,

Քարտուղար՝ Ս.Թամամավեյան

ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի մասին

Մ.Մովսիսյան

1) «Գնումների համակարգող /քարտուղար/ Սեդա Թամամավեյանը հայտարարեց, որ Auction էլեկտրոնային համակարգով գնային առաջարկ է ներկայացրել 2 /երկու/ մասնակից՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1	«ՄԵԼԹ ՄԵԹԱԼ» ՍՊԸ	Ք.Արմավիր, 21/5 meltmetal@mail.ru
2	«ԱՐՄ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ	Ք.Գավառ, Արծրունի Եղբայրներ փողոց 166 arm.textile@mail.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտը ըստ չափաբաժինների՝

- «ՄԵԼԹ ՄԵԹԱԼ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 1, 3 չափաբաժինների մասով,
- «ԱՐՄ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 1,2,3,4,5 չափաբաժինների մասով,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3) Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը պարզվեց.

3.1) «ՄԵԼԹ ՄԵԹԱԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- Մասնակցի կողմից ներկայացրած հայտի հավելված N 1-ում 3-ում իրական շահառուների կայքհղումը ներկայացված է 2023 թվականի համար, այն ինչ պետք է լինի 2024 թվականի թարմացված տվյալները:

3.2) «ԱՐՄ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- Հայտով ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրում «ֆիրմային անվանումը», «ապրանքնային նշանը», «մակնիշը» և «արտադրողի անվանումը» սյունակները լրացված չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

5) Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետը և 2024 թվականի հունիսի 20-ին ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/24 ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հրավերի փաթեթի I-ին մասի 8.11 կետի պահանջները, **գնահատող հանձնաժողովը որոշեց՝** կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով՝ «ՄԵԼԹ ՄԵԹԱԼ» ՍՊԸ-ին և «ԱՐՄ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 04/07/2024 թվականի ժամը 18:00-ն, շտկել վերը

նշված բոլոր անհամապատասխանությունները և Auction էլեկտրոնային համակարգի միջոցով ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

Վերը նշված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի հրավերի պահանջներին չհամապատասխանող (անբավարար) և կմերժվի՝ դիտելով որպես գնման գործընթացի խախտում՝ ներառելով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

6) Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի հուլիսի 5-ին ժամը 12:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Մ.ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ա.ԲՈՇՅԱՆ
		Ն.ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ԹԱՄԱՄԱՎԵՅԱՆ